

11. Դասարանի 13 աշակերտներից քանի՞ իրարից տարբեր եղանակներով կարելի է ընտրել 11 հոգանոց ֆուտբոլի թիմ:

- 1) 66 2) այլ պատասխան 3) 55 4) 78

12. Գտնել 101·9+16·101-ի բաժանարարների քանակը:

- 1) 6 2) 4 3) 5 4) 3

13. Գրատախտակին գրված են մի քանի բնական թվեր, որոնց ն' գումարը, ն' արտադրյալը 253 է: Քանի՞ թիվ է գրված գրատախտակին:

- 1) 219 2) 221 3) հնարավոր չէ որոշել 4) 223

14. Քանի՞ վեցանիշ թիվ գոյություն ունի, որի տասնորդական գրառության մեջ, որևէ 4 հաջորդական թվանշաններով կազմված թիվը 2023 է (օր.՝ 202399; 120238;):

- 1) 180 2) 280 3) 100 4) 90

15. Էլեկտրոնային ժամատախտակը օրվա ժամը ցույց է տալիս 00:00-ից մինչև 23:59 (օր.՝ 20:27): Գտնել օրվա այն ժամի բոլոր թվանշանների արտադրյալը, որի արժեքը ամենամեծն է օրվա բոլոր ժամերի թվանշանների արտադրյալից:

- 1) 400 2) այլ պատասխան 3) 225 4) 405

16. Ա քաղաքից դեպի Բ քաղաք միաժամանակ շարժվում են երկու մեքենաներ՝ I-ը 20 մ/վ, իսկ II-ը 40 կմ/ժ արագություններով: I մեքենայի Բ քաղաք հասնելու ժամանակահատվածը քանի՞ %-ով է ավել II մեքենայի Բ քաղաք հասնելու ժամանակահատվածից, եթե Ա և Բ քաղաքների միջև հեռավորությունը 180 կմ է և I մեքենան ճանապարհին կատարել է 6 ժ 30 ր հարկադրված կանգառ:


17. Գրքի էջերի համարակալման համար (առաջին էջից սկսած մինչև վերջին էջը ներառյալ) օգտագործել են 708 թվանշան: Քանի՞ էջ ունի այդ գիրքը:

18. x և y թվերի համար սահմանվում է Δ գործողությունը հետևյալ կերպ՝

$$x\Delta y = xy + x + y:$$

Հաշվել՝ $(b\Delta b)\Delta b - (a\Delta a)\Delta a$, եթե $b=2$; $a=1$:

19. Վարդանը ցանկանում է ներկել նկարում պատկերված ուղղանկյուններն այնպես, որ ոչ մի հարևան կողմով ուղղանկյուններ միևնույն գույնի չլինեն: Ամենաքիչը քանի՞ իրարից տարբեր գույներ կարող է օգտագործել Վարդանը այդպիսի ներկման համար:



20. Արամը և Գեղամը բնակվում են միևնույն տանը: Երբ Արամը դուրս եկավ տանից դպրոց գնալու, նույն պահին Գեղամը դուրս եկավ դպրոցից՝ գնալով դեպի տուն: Նրանց հանդիպման պահին Արամը անցել էր տնից դեպի դպրոց ճանապարհի $2/5$ -ը: Երբ Գեղամը հասավ տուն, Արամի դպրոց հասնելուն մնացել էր 150 մ: Քանի՞ մետր է տանից դպրոց հեռավորությունը: